

ԼՐԱՑՈՒ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՆԻՍՏԸ,
ՆՎԻՐՎԱԾ Ի. Վ. ՄՏԱԼԻՆԻ «ՄԱՐՔՍԻԶՄԸ ԵՎ ԼԵՋՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐԸ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

1952 թ. հունիսի 20—21-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հասարակական գիտությունների բաժանմունքի նիստը, նվիրված Ի. Վ. Մտալինի «Մարքսիզմը և լեգվարանության հարցերը» աշխատության հրապարակման երկրորդ տարեդարձին:

Ներածական խոսքով նիստը բացեց Հայկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ Գ. Ա. Ղափանցյանը, որից հետո լսվեցին հետևյալ ղեկուցումները. Ի. Վ. Մտալինի «Մարքսիզմը և լեգվարանության հարցերը» աշխատությունը որպես մարքս-լենինյան փիլիսոփայության զարգացման նոր էտապ: Ջեկուցող՝ Վ. Վ. Ղազանջյան: Որակական անցումները լեգվի մեջ: Ջեկուցող՝ պրոֆ. դոկտոր Է. Բ. Աղայան:

Հունիսի 21-ին լսվեցին հետևյալ ղեկուցումները. Ժամանակակից հայերենի կադմավորումը: Ջեկուցող՝ Ֆիլոլոգ, դիտ. թեկնածու Ս. Ղ. Ղազարյան: Հայ բարրառադիտության մի քանի հարցերը ստալինյան լեգվարանական ուսմունքի լույսի տակ: Ջեկուցող՝ Ֆիլոլոգ, դիտ. թեկնածու Ա. Վ. Գրիգորյան: Սովետական հնագիտության անելիքները Ի. Վ. Մտալինի «Մարքսիզմը և լեգվարանության հարցերը» աշխատության լույսի տակ: Ջեկուցող՝ պատմ. դիտ. թեկնածու Կ. Գ. Ղաֆազարյան: Ի. Վ. Մտալինի «Մարքսիզմը և լեգվարանության հարցերը» աշխատությունը և սովետական դրահանության հետադադարացման ուղիները: Ջեկուցող՝ պրոֆ. Ն. Մ. Մելիքյան: Հայ բանասիրության խնդիրները Ի. Վ. Մտալինի «Մարքսիզմը և լեգվարանության հարցերը» աշխատության լույսի տակ: Ջեկուցող՝ պատմ. դիտ. թեկնածու Լ. Ս. Խաչիկյան:

Կարգացված ղեկուցումները կտպագրվեն «Տեղեկագրի» հաջորդ համարներում:

Ե Ր Ե Կ Ո Ւ Յ Թ

ՆՎԻՐՎԱԾ ԲԱՆԱՍՏԵՂԾ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
ՀԻՇԱՏԱԿԻՆ

1952 թ. մայիսի 20-ին Թբիլիսիի Ռուսթավելու անվան թատրոնի համերգային զահլիճում կայացավ հատուկ երեկույթ, նվիրված հայ մեծատաղանդ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի հիշատակին: Երեկույթը անցավ շատ արդյունավետ և վերածվեց անզրկակովկասյան ժողովուրդների եղբայրական ջերմ սիրո ու բարեկամության ցույցի:

Երեկույթին ներկա էին Վրաստանի մայրաքաղաքի ձեռնարկությունների բաղմաթիվ ստախանովականներ, գիտություն, արվեստի ու դրականության աշխատողներ, բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներ, ներկա էր երեկույթին մասնակցելու համար Երևանից ժամանած պատվիրակությունը՝ Հայկական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր Անուշավան Տեր-Ղևոնդյանի ղեկավարությամբ:

Երեկույթը բաց արեց ՍՍՌԿ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ՝ պրոֆեսոր Ա. Շանիձեն, իր ներածական խոսքում պրոֆեսոր Շանիձեն նշում է հայ և վրաց ժողովուրդների զարավոր համատեղ պայքարը օտարերկրյա գավթիչների ու տեղական հարստահարողների դեմ, հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի արժեքավոր ավանդը՝ անզրկովկասյան ժողովուրդների մեջ փոխադարձ սեր և եղբայրության զգացում պատվաստելու գործում:

Բանաստեղծի կյանքի և ստեղծագործությունների մասին ընդարձակ գեկուցումով հանդես եկավ Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ՝ պրոֆեսոր Ա. Բարամիձեն:

Թումանյանի հարուստ և բազմաբովանդակ կյանքը գնահատելով որպես անկաշառ սիրով ժողովրդին նվիրվածության պայծառ օրինակ, պրոֆեսոր Բարամիձեն հանդամանորեն կանգ առավ բանաստեղծի ստեղծագործությունների ակունքը հանդիսացող ժողովրդական մոտիվների, նրա կերտած անմահ երկերի վերլուծության վրա:

Ջեկուցողը նշեց, որ Թումանյանը, ձայնակցելով ժամանակի առաջավոր վրաց մտավորականների հետ, հայ և վրաց ժողովուրդների բախտը անվերապահորեն կապում էր ռուս մեծ ժողովրդի հետ:

Հովհաննես Թումանյանի և վրացական կուլտուրայի սերտ կապի մասին է խոսում պատմական գիտությունների թեկնածու Վ. Իմեդաձեն: Նրա գեկուցման մեջ էջ առ էջ արտացոլվում է եղբայրական Վրաստանում իր երկրորդ հայրենիքը գտած մեծ բանաստեղծի գրական ու հասարակական հարուստ կյանքը: Սրտակից բարեկամություն և մտերմություն ստեղծելով Վրաստանի արվեստի ու գրականության նշանավոր գործիչների՝ Ա. Մերեթելու, Ի. Ծավճավաձեի, Ն. Նիկոլաձեի, Ի. Գրիշաշվիլու և մյուսների հետ, Թումանյանը անձնական օրինակով տալիս էր հայ և վրաց ժողովուրդների բարեկամության, կուլտուրական կապի փայլուն օրինակ, փոխադարձաբար արժանանալով իր վրացի բարեկամների ամենաջերմ սիրուն:

Հովհաննես Թումանյանի լավագույն երկերը վաղուց արդեն դարձել են վրաց ժողովրդի սեփականությունը: Այդ գործում անգնահատելի է վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, պոետ Ի. Գրիշաշվիլու դերը, որը բանաստեղծական մեծ վարպետությամբ, Թումանյանական շնչով ու նրբությամբ թարգմանել է անմահ պոետի («Անուշը», «Մի կաթիլ մեղրը», «Հոռեցի Սաքոն», «Շունն ու կատուն» և այլ գործեր):

Հանդիսատեսները խանդավառությամբ են դիմավորում Թումանյանի մոտիկ բարեկամ, նրա լավագույն թարգման Գրիշաշվիլու ելույթը: Հետաքրքիր ու արժեքավոր հուշեր պատմելով Թումանյանի մասին, Գրիշաշվիլին իր ելույթն ավարտում է պոետի «Նվեր Վրաստանի բանաստեղծներին» նշանավոր բանաստեղծության արտասանությամբ:

Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, պրոֆեսոր Ի. Արուլաձեն հայերեն լեզվով իր ջերմ ելույթում նշում է, որ հայ մեծ բանաստեղծի գրական հարուստ ժառանգությունն իսկական գնահատականի արժանացավ մեր օրերում՝ ստալինյան պայծառ արևի տակ:

Ելույթ ունեցավ նաև գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Ա. Գուլիսաշվիլին:

Երեկոյթի հանդիսավոր մասին հաջորդեց ճոխ ու բովանդակալի համերգը՝ Վրաստանի դրամատիկ և օպերային թատրոնների լավագույն ուժերի մասնակցությամբ:

Վրացական ռեսպուբլիկայի ժողովրդական արտիստներ, Ստալինյան մրցանակի լաուրեատ, Պիեր Կորախիձեն և Թամարա Ծավճավաձեն հատվածներ արտասանեցին Թումանյանի «Անուշ» պոեմից:

Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստ, Ստալինյան մրցանակի լաուրեատ Շարա Տալյանը, կոմպոզիտոր Ա. Տիգրանյանի՝ «Անուշ» օպերայի Սարոյի դերի առաջին բեմականացնողը, հաջողությամբ հանդես եկավ «Բարձր սարեր», Ռ. Մելիքյանի՝ «Աշնան երգի», Ա. Սպենդիարովի՝ «Ալմաստ» օպերայի «Աշուղի երգի» կատարումով:

Հանդիսատեսների կողմից ջերմագին ընդունելություն գտան Վրացական ՍՍՌ վաստակավոր արտիստ Մերի Նակաշիձեն և Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստ, Ստալինյան մրցանակի լաուրեատ Տաթևիկ Սադանդարյանը, առաջինը «Ծիծեռնակ» հայկական ժողովրդական երգի և Շտրաուսի «Վալսի», երկրորդը՝ Ռ. Մելիքյանի «Կաքավիկ», «Այվարդ» և այլ երգերի կատարումով:

Այնուհետև ելույթ է ունենում Հայկական ՍՍՌ վաստակավոր արտիստ, Ստալինյան մրցանակի լաուրեատ Գոհար Գասպարյանը:

Անմահ Թումանյանի երկերը թարգմանված են Սովետական Միության եղբայրական ժողովուրդների և, առաջին հերթին, ռուս մեծ ժողովրդի լեզվով: Այդ թարգմանություններից մի նմուշի՝ «Մարո» պոեմի արտասանությամբ հանդես եկավ ասմունքի վարպետ Թամարա Դեմոբյանը:

Համերգային բաժնի հաջողութեանը մեծապէս նպաստեցին Վրացական ՍՍՌ վաստակավոր արտիստ Պահարեն՝ «Շունն ու կատուն» պոեմի արտասանութեամբ, Թրիլիսիի Պետհաղորամայի դերասան Բաբկեն Ներսիսյանը՝ Հովհ. Թումանյանի, Սայաթ-Նովայի, Գ. Օրբելիանու ստեղծագործութիւններու արտասանութեամբ, ինչպէս և Զ. Պալիաշվիլու անվան օպերայի և բալետի թատրոնի երգչուհի Լեյլա Գեորգիւսեան՝ մի քանի երգերով։

Հովհաննէս Թումանյանի հիշատակին նվիրված երեկոն մեկ անգամ ևս ապացուցեց ժողովուրդներու ստալինյան բարեկամութեան զրոշի տակ կոմունիզմ կառուցող հայ և վրաց ժողովուրդներու անխզելի սերն ու եղբայրութիւնը։

